# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 01

ք.Երևան «19» նոյեմբերի 2021թ.

Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի գլխավոր քարտուղար Միքայել Զալինյանի, որը գործում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պետական մարմին), մի կողմից, և ««Սյունիք» օդանավակայան» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Կարեն Վարդանյանի, որը գործում է ««Սյունիք» օդանավակայան» ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կազմակերպություն), մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021թ. նոյեմբերի 11-ի թիվ 1866-Ն որոշումը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը ՀՀ կառավարության 2021թ. նոյեմբերի 11-ի՝ «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ ու լրացում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը գումար հատկացնելու մասին» թիվ 1866-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն ««Սյունիք» օդանավակայան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ կրած վնասների, կուտակված պարտավորությունների մարման նպատակով տրամադրում է 49,508,800 (քառասունինը միլիոն հինգ հարյուր ութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումար դրամաշնորհային գումար:

## 2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Պետական մարմինը պարտավորվում է Կազմակերպությանը տրամադրել սույն պայմանագրի 1.1 կետում նշված դրամական միջոցները մինչև 2021 թվականի նոյեմբերի 26-ը: Դրամական միջոցները տրամադրվում են Կազմակերպությանը անկանխիկ՝ Կազմակերպության բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

2.2. Սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը իրականացնում է Որոշմամբ սահմանված ֆինանսական պարտավորությունների մարման գործընթաց՝ իր գործունեության բնականոն ընթացքը ապահովելու նպատակով:

2.3. Պետական մարմնի կողմից տրամադրված դրամաշնորհի գումարը կամ դրա մի մասը Կազմակերպության կողմից Որոշմամբ սահմանված նշանակությանն անհամապատասխան կամ ոչ նպատակային օգտագործման դեպքում կատարվում է դրամաշնորհի գումարի հետգանձում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.4 Պետական մարմինը իրավասու է ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

Digitally signed by VARDANYAN KAREN 4011880582 Date: 2021.11.19 20:53:27 AMT

2.5. Կազմակերպությունը պարտավոր է.

2.5.1. Սույն պայմանագրի 1-ին կետով սահմանված դրամական միջոցները ծախսել ՀՀ կառավարության 2021թ. նոյեմբերի 11-ի թիվ 1866–Ն որոշմամբ նախատեսված նպատակներին համապատասխան:

2.5.2. Վարել տրամադրված դրամական միջոցների օգտագործման բոլոր գործառնությունների առանձնացված հաշվառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.5.3. Սույն պայմանագրի շրջանակներում Պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ միջոցառման ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն:

2.5.4. Կազմակերպությունը պարտավոր է 2022թ. հունվարի 28-ի դրությամբ նախատեսված նպատակներով չօգտագործված գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

2.5.5. Կազմակերպությունը պարտավոր է մինչև 2022թ. փետրվարի 28-ը սահմանված կարգով Պետական մարմնին ներկայացնել տեղեկատվություն վերջինիս տրամադրված դրամական միջոցների օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև ծրագրի իրականացման արդյունքներով չօգտագործված և պետական բյուջե վերադարձված գումարների մասին:

## 3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և/կամ արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 4. Այլ պայմաններ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2022 թվականի մարտի 1-ը:

4.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.3. Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են կողմերի ստորագրությամբ՝ գրավոր համաձայնագիր կնքելու միջոցով:

4.4. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են պայմանագրի կնքման պահին գործող ՀՀ օրենսդրության պահանջները:

## 5. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

| **Պետական մարմնին** | **Կազմակերպություն** |
|---|---|
| Քաղաքացիական ավիացիայի կոմիտե<br>Հասցե՝ ք. Երևան-42,<br>«Զվարթնոց» ՕԿ, Ինդեքս 0042<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ թիվ 1 տգբ 900011038719<br>ՀՎՀՀ՝ 01204231 | ««Սյունիք» օդանավակայան» ՍՊԸ<br>Իրավ. Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ,<br>ք. Կապան, Հ.Ավետիսյան փ. 22Ա շենք,<br>Գործ. հասցե՝ Կապան համայնք,<br>Գաղթական 70<br>Ամերիաբանկ ՓԲԸ<br>Հ/Հ 1570026109520100<br>ՀՎՀՀ՝ 09425652 |
| Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի<br>գլխավոր քարտուղար | ««Սյունիք» օդանավակայան» ՍՊԸ<br>տնօրեն |
| _____ Մ. ՉԱԼԻՆՅԱՆ<br>(ստորագրություն) | _____ Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ<br>(ստորագրություն) |